

DOI:10.46991/FLSP.2026.26.055

Սեդա Գասպարյան*
Երևանի Պետական Համալսարան
Նելլի Այվազյան†
Երևանի Պետական Համալսարան

ԼԵԶՎԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՉԱՍԻՉՈՑՆԵՐԻ
ՊԵՐՍՈՒԱԶԻՎ ՆԵՐՈՒԺԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԴԻՍԿՈՒՐՍՈՒՄ


ABSTRACT

**THE PERSUASIVE POTENTIAL OF LINGUISTIC EXPRESSIONS
IN POLITICAL DISCOURSE**

This article examines the persuasive potential of linguistic expressive means in political discourse, viewing it as an important tool for influence and the formation of public opinion. By applying discourse, stylistic, and semantic analyses, the study identifies the main linguistic devices of persuasion, including the use of personal pronouns, evaluative vocabulary and metaphors. The analysis shows that political discourse is dominated by strategies of positive self-presentation and the “us vs. them” dichotomy, as well as by metaphorical models that enhance the persuasive impact of speech. As a result, language in political discourse is shown to function not only as a means of communication, but also as a key instrument of influence and ideological construction.

* e-mail: sedagasparyan@ysu.am

† e-mail: nayvazyan@ysu.am



This work is licensed under a Creative Commons
Attribution-NonCommercial 4.0 International License.

Received: 09/06/2026

Revised: 19/06/2026

Accepted: 30/06/2026

© The Author(s) 2026

Keywords: political discourse, persuasion, linguistic expressive means, persuasive strategies, discourse analysis, political communication, ideology.

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածը ուսումնասիրում է լեզվական արտահայտչամիջոցների պերսուազիվ ներուժը քաղաքական դիսկուրսում՝ այն դիտարկելով որպես ազդեցության և հանրային կարծիքի ձևավորման կարևոր գործիք: Դիսկուրսային, լեզվաճանկական և իմաստաբանական վերլուծությունների կիրառությամբ բացահայտվում են համոզման հիմնական լեզվական միջոցները՝ անձնական դերանուններ, գնահատողական բառապաշար և փոխաբերություններ:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ քաղաքական դիսկուրսում գերիշխում են դրական ինքնաներկայացման և «յուրայիններ/օտարներ» հակադրության վրա հիմնված ռազմավարությունները, ինչպես նաև փոխաբերական մոդելները, որոնք ավելի արդյունավետ են դարձնում խոսքի ներգործությունը: Ուսումնասիրությամբ հաստատվում է, որ քաղաքական դիսկուրսում լեզուն ոչ միայն հաղորդակցման, այլև ազդեցության և գաղափարների ձևավորման առանցքային միջոց է:

Բանալի բառեր՝ քաղաքական դիսկուրս, պերսուազիա, լեզվական արտահայտչամիջոցներ, համոզման ռազմավարություն, դիսկուրսային վերլուծություն, քաղաքական հաղորդակցություն, գաղափարախոսություն:

РЕЗЮМЕ

ПЕРСУАЗИВНЫЙ ПОТЕНЦИАЛ ЯЗЫКОВЫХ ВЫРАЖЕНИЙ В ПОЛИТИЧЕСКОМ ДИСКУРСЕ

В данной статье рассматривается персуазивный потенциал языковых средств выразительности в политическом дискурсе как важный инструмент воздействия и формирования общественного мнения. На основе дискурсивного, стилистического и семантического анализа выявляются основные языковые средства убеждения, включая использование личных местоимений, оценочной лексики и метафор. Анализ показывает, что в политическом дискурсе доминируют

стратегии позитивной самопрезентации и дихотомии «свои — чужие», а также метафорические модели, усиливающие убеждающее воздействие речи. В результате язык в политическом дискурсе рассматривается не только как средство коммуникации, но и как ключевой инструмент влияния и идеологического конструирования.

Ключевые слова: политический дискурс, убеждение, языковые средства выразительности, персуазивные стратегии, дискурсивный анализ, политическая коммуникация, идеология.

Ներածություն

Ժամանակակից հասարակական-քաղաքական գործընթացներում լեզուն առանձնահատուկ դեր է կատարում հանրային կարծիքի ձևավորման, գաղափարների տարածման և քաղաքական որոշումների լեգիտիմացման գործընթացում: Քաղաքական դիսկուրսը դիտարկվում է որպես հաղորդակցական այնպիսի միջավայր, որտեղ լեզվական միավորների միջոցով ձևավորվում և տարածվում են քաղաքական գաղափարներ, արժեքներ և գաղափարախոսություններ: Քաղաքական դերակատարները, օգտագործելով տարբեր հոռետրական և լեզվական ռազմավարություններ, ձգտում են ազդել լսարանի ընկալումների, գնահատականների և վարքագծի վրա:

Քաղաքական դիսկուրսի լեզվաբանական ուսումնասիրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հենց այս ոլորտում է լեզվի ազդեցությունը հասարակական կյանքի վրա առավել տեսանելի: Քաղաքական հաղորդակցության մեջ լեզուն հանդես է գալիս ոչ միայն որպես տեղեկատվության փոխանցման

միջոց, այլև որպես ազդեցության և համոզման գործիք: Այդ է պատճառը, որ քաղաքական դիսկուրսը դիտարկվում է որպես բարդ հաղորդակցական համակարգ, որի շրջանակներում կարևորվում են ինչպես լեզվական, այնպես էլ արտալեզվական գործոնները՝ գաղափարախոսություն, մշակութային արժեքներ, սոցիալական համատեքստ և հաղորդակցական նպատակներ:

Քաղաքական դիսկուրսի ուսումնասիրության կարևոր ուղղություններից է համոզման մեխանիզմների և լեզվական ռազմավարությունների վերլուծությունը: Քաղաքական խոսույթում կիրառվող լեզվական միջոցները՝ դերանունները, գնահատողական բառապաշարը, փոխաբերությունները և տարաբնույթ հոբետորական հնարանքներ, նպաստում են որոշակի քաղաքական դիրքորոշումների ներկայացմանը և հանրային ընկալումների ձևավորմանը: Հետևաբար՝ քաղաքական դիսկուրսի վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտել այն լեզվական մեխանիզմները, որոնց միջոցով իրականացվում է ինչպես գաղափարների տարածում, այնպես էլ իշխանության լեգիտիմացում:

Սույն աշխատանքը նպատակ ունի ներկայացնելու քաղաքական դիսկուրսի երևույթի տեսական հիմքերը, դրա հիմնական բնութագրիչներն ու գործառույթները, ինչպես նաև ցույց տալու այն լեզվական միջոցները, որոնց միջոցով քաղաքական հաղորդակցության դաշտում առկայացվում է համոզման ռազմավարությունը:

Մեթոդաբանություն

Սույն հետազոտության մեթոդաբանական հիմքում դիսկուրսի վերլուծության ժամանակակից լեզվաբանական մոտեցումներն են: Էապես կանոնվում են նաև քաղաքական լեզվաբանության և քննադատական դիսկուրսի վերլուծության ոլորտում ձևավորված տեսությունները, մասնավորապես՝ Թ. վան Դեյքի, Ն. Ֆերկլաֆի, Ռ. Վոդակի, Ե. Շեյգալի, Ա. Չուդինովի աշխատությունները (Van Dijk T., 1997; Fairclough, 1997; Водак, 1997; Шейгал, 2000; Чудинов, 2008): Հետազոտության ընթացքում կիրառվել են մի քանի փոխլրացնող մեթոդներ, որոնց շարքում հատկապես որոշիչ է դիսկուրսային վերլուծության մեթոդը: Հենց այս մեթոդի կիրառությամբ է, որ քաղաքական տեքստերը դիտարկվում են որպես ոչ միայն լեզվական կառուցվածքներ, այլև հաղորդակցական գործընթացներ, որոնք պայմանավորված են սոցիալական, քաղաքական և մշակութային համատեքստով: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս ուսումնասիրել քաղաքական խոսույթի գաղափարական և գործաբանական բաղադրիչները:

Երկրորդը լեզվական-ոճագիտական վերլուծության մեթոդն է, որի օգնությամբ ուսումնասիրվում են քաղաքական տեքստերում կիրառվող լեզվական միջոցները՝ անձնական դերանունները, գնահատողական բառապաշարը, փոխաբերությունները և շարահյուսական կառույցները՝ բացահայտելով այն լեզվական ռազմավարությունները, որոնք նպաստում են քաղաքական

հաղորդակցության ներգործման և համոզման գործառույթի իրացմանը:

Հետազոտության ընթացքում կիրառվել են նաև իմաստաբանական և համատեքստային վերլուծության սկզբունքները, որն էլ թույլ է տվել վեր հանել քաղաքական խոսույթում առկա գաղափարական և արժեքաբանական իմաստները: Այս մոտեցմամբ բացահայտվել են իմաստային այն շերտերը, որոնք ձևավորում են «յուրայիններ» և «օտարներ» հակադրությունը՝ նպաստելով քաղաքական ինքնության կառուցմանը:

Ի հավելումն վերը թվարկված մեթոդների, աշխատանքում իրականացվել է նաև ֆրանսալեզու և անգլալեզու քաղաքական ելույթների կոնկրետ հատվածների միկրովերլուծություն, որի շրջանակներում քննության է առնվել քաղաքական խոսույթի համոզման ռազմավարությունների լեզվական իրացումը:

Քաղաքական դիսկուրսի քննության տեսական հիմքերը և պերսուազիվ գործառույթը քաղաքական հաղորդակցության մեջ

Լեզվաբանների մեծ հետաքրքրությունը քաղաքական լեզվի հանդեպ միանգամայն բնական է, քանի որ մարդկային հաղորդակցության այս ոլորտում է, որ հատկապես նշանակալի է լեզվի ազդեցությունը հասարակական կյանքի վրա: Ինչպես նշում է

Չիլտոնը՝ քաղաքականությունը կախված է լեզվական դրսևորումից (Chilton, 2002: 3–4):

Քաղաքական դիսկուրսի սահմանումները բազմաթիվ են ու բազմատեսակ: Օրինակ, ըստ Ա.Ն.Բարանովի սահմանման՝ քաղաքական դիսկուրսը «քաղաքական քննարկումներում օգտագործվող խոսքային գործողությունների ամբողջություն» է (Баранов, 1991:64), մինչդեռ Կոսերիովի կարծիքով՝ խոսքն ինքնին «քաղաքականապես լիցքավորված» է, քանի որ այն համերաշխության նշան է նույն լեզուն օգտագործող հասարակության մյուս անդամների հետ (ըստ՝ Нарумов, URL: <http://danefae.org/pprs/venedikt/narumov.htm>): Շեյգալը քաղաքական դիսկուրսը պատկերացնում է որպես եզակի նշանային համակարգ, որտեղ տեղի են ունենում լեզվական տարբեր միավորների և խոսքային ստանդարտ գործընթացների իմաստային և գործառույթային ձևափոխումներ: Այսինքն՝ խոսքն այստեղ գնում է ոչ միայն լեզվի՝ որպես քաղաքականության մեջ կարևոր գործոնի, այլև «քաղաքականության լեզվի» մասին (Шейгал, 2000: 368):

Լեզվաքաղաքական ուսումնասիրություններում միմյանց հետ զուգահեռաբար կիրառության մեջ կարող ենք տեսնել հետևյալ եզրույթները՝ «քաղաքականության լեզու», «քաղաքական հաղորդակցություն», «քաղաքական դիսկուրս»: Վերջին երկու արտահայտությունները շատ հաճախ իրար փոխարինում են, իսկ «քաղաքականության լեզու» հասկացության շուրջ կան տարբեր տեսակետներ: Այսպես՝ Ա.Ն. Բարանովը քաղաքական լեզուն

համարում է հատուկ նշանային համակարգ, որը նախատեսված է քաղաքական հաղորդակցության համար՝ հասարակական կոնսենսուս զարգացնելու, քաղաքական և հասարակական որոշումներ կայացնելու և դրանք հիմնավորելու համար (Баранов, 1991: 6):

Այլ կարծիք է առաջ քաշում ամերիկացի քաղաքականագետ Դ. Գրեյբերը՝ ընդձեռնելով, որ լեզուն քաղաքական են դարձնում ոչ թե հատուկ ընտրված քաղաքական բառապաշարը կամ քերականական կառույցները, այլ փոխանցվող տեղեկատվության բովանդակային կողմը, իրավիճակը, հասարակական համատեքստը և, իհարկե, հաղորդակցության գործառույթը (Graber, 1981: 196):

Պարզինը ևս կասկածի տակ է դնում քաղաքական լեզվի գոյությունը և նշում, որ չի կարելի ենթադրել, թե քաղաքական լեզուն դուրս է տվյալ լեզվի քերականական և բառագիտական նորմերի շրջանակից (Паршин, 2000: 75):

Այս հարցում Շեյգալի տեսակետը առավել մոտ է Բարանովին: Նա քաղաքական լեզուն սահմանում է որպես նշանների ամբողջականություն, որը ձևավորում է քաղաքական դիսկուրսի նշանագիտական տիրույթը: Այս տիրույթում է, որ միավորվում են հատուկ մասնագիտացված լեզվական և ոչ լեզվական նշանները, ինչպես նաև ընդհանուր կիրառության նշանները, որոնք հաղորդակցության առանձնահատկության հենքի վրա ձեռք են բերում որոշակի բովանդակային երանգավորում (Шейгал, 2000: 22): Հատկանշական է, որ Շեյգալը սարբերություն է դնում

քաղաքականության լեզու և **քաղաքական լեզու** հասկացությունների միջև: Եթե քաղաքականության լեզուն քաղաքական գործունեության տերմինաբանությունն ու հոեոտրաբանությունն են, որ քաղաքական գործիչներն օգտագործում են իրենց մասնագիտական դերակատարության ընթացքում, ապա քաղաքական լեզուն ռեսուրս է, որը բաց է լեզվական հանրության բոլոր անդամների համար և համոզման ու վերահսկողության նպատակով հատուկ կիրառություն ունի (Шейгал, 2000: 31-32):

Քաղաքական դիսկուրսի բուն ուսումնասիրությանն անցնելուց առաջ կարծում ենք տեղին է անդրադարձ կատարել «դիսկուրս» հասկացությանը: Լեզվաբանության մեջ դիսկուրսը ընդունված է դիտարկել այնպիսի հասկացությունների հետ սերտ կապի մեջ, ինչպիսիք են ասույթը, խոսքը, խոսքային գործունեությունը, տեքստը, հաղորդակցական իրավիճակը, մենախոսությունը կամ երկխոսությունը: Այդուհանդերձ, այս փոխկապակցվածությունը մի կողմից խոչընդոտում է դիսկուրսի միանշանակ սահմանմանը, մյուս կողմից թյուր պատկերացում է ստեղծում վերը թվարկված երևույթների մասին:

«Դիսկուրս» տերմինը սահմանելու առաջին փորձերը արվել են դիսկուրսի ժամանակակից տեսության ի հայտ գալուց շատ առաջ: Ի սկզբանե, ներկայացված տերմինը ֆրանսերենում օգտագործվել է երկխոսություն իմաստով (discours, լատիներեն discursus – ելույթ): Դիսկուրսի տեսության զարգացմանը զուգընթաց լեզվաբանների համար առաջնային հարց է դարձել դիսկուրս հասկացության

սահմանման ձևակերպումը լեզվաբանական տեսանկյունից: Բազմաթիվ լեզվաբանների սահմանումներում կարելի է նկատել, որ «դիսկուրս» և «տեքստ» հասկացությունները զուգահեռաբար են կիրառվում: Այս երկու հասկացությունների կապը կարող ենք տեսնել Արությունովայի ուսումնասիրության մեջ: Լեզվաբանը դիսկուրսն ընկալում է որպես որոշակի տեքստ՝ սակայն չանտեսելով դրա արտալեզվական առանձնահատկությունները: Այսինքն՝ դիսկուրս հասկացությունն ավելի ընդգրկուն է և չի կրում բացառապես տեքստային բնութագիր, այլ ներառում է այն պայմանները, որոնցում այն առկայացվել է (Арутюнова, 1990: 136-137; տես նաև Գասպարյան, 2017: 79-91):

Հատկանշական է, որ դիսկուրսի ուսումնասիրման երկու հիմնական մոտեցումներ են առանձնացվում լեզվաբանության մեջ՝ հաղորդակցական և լեզվաճանաչողական: Հաղորդակցական մոտեցման շրջանակներում դիսկուրսը բնութագրվում է որպես հաղորդակցական գործընթաց, և դրա համարժեքներն են այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ «խոսք», «խոսքային գործընթաց», «հաղորդակցական իրավիճակ» և այլն (Арутюнова, 1990; Гийом Ж., Мальдидье Д, 1999; Борботько, 2011): Սույն մոտեցումը ձևավորվել է Է. Բենվենիստի հետազոտության շնորհիվ, որը դիսկուրսը դիտարկում է որպես հաղորդակցվողների միջև ձևավորված խոսք, որը չի սահմանափակվում սուկ հայտարարությունների շարքով (ըստ՝ Гийом, 1999: 124):

Հաղորդակցական մոտեցմանն է հարում նաև Կարասիկը: Լեզվաբանը դիսկուրսը սահմանում է որպես որոշակի նշանային կառուցվածք, որը բնութագրվում է օբյեկտի, սուբյեկտի, ժամանակի և հանգամանքների առկայությամբ (Карасик, 2009: 5):

Երկրորդ մոտեցումը՝ լեզվաճանաչողականը, սկիզբ է առնում վան Դեյքի ուսումնասիրություններում, որտեղ դիսկուրսը դիտարկվում է որպես «լեզվական ձևի, գիտելիքի և գործողության բարդ միասնություն» (Дейк, 1989: 121): Լեզվաբանը նշում է, որ հաղորդակցման ցանկացած իրավիճակում զրուցակիցները պետք է ընտրեն հաղորդակցման թեմատիկան: Կարևորվում է, որ առաջնահերթությունը տրվի այն թեմաներին, որոնք կանխորոշված են հենց հաղորդակցական ազդեցության իրավիճակով: Հաղորդակցման ռազմավարությունն ուղղակիորեն կախված է հաղորդակցման իրավիճակից, բանախոսի հաղորդակցական դիրքերից, արտաքին հանգամանքներից, հասցեատիրոջ դիրքից, դիսկուրսի տեսակից և այլն (Дейк, 1989: 28): Ելնելով վան Դեյքի դիտարկումներից՝ կարող ենք եզրակացնել, որ դիսկուրսը ներառում է ոչ միայն լեզվական հայեցակերպը (բուն տեքստը), այլև արտալեզվական առանձնահատկությունները, որոնք ներառում են տվյալ տեքստը հասկանալու համար

Չուդինովը, դիսկուրսը դիտարկում է որպես հաղորդակցական գործունեության դինամիկ ձև, որը չի սահմանափակվում միայն խոսքում կամ գրավոր ձևով ստեղծված տեքստով: Այն ներկայացնում է ամբողջական հաղորդակցական

գործընթաց՝ պայմանավորված կոնկրետ իրավիճակով և սոցիալ-մշակութային միջավայրով, որտեղ հաղորդակցության մասնակիցները փոխազդում են լեզվական և այլ նշանային համակարգերի միջոցով: (Чудинов, 2008: 40):

Այսպիսով, կարող ենք փաստել, որ քաղաքական դիսկուրս հասկացության տակ պետք է հասկանալ տեքստն իր ողջ ծավալով, որտեղ արտացոլված են կոնկրետ երկրների, առանձին քաղաքական կուսակցությունների և շարժումների քաղաքական և գաղափարական ռազմավարությունը կոնկրետ պատմական ժամանակաշրջանում, և, իհարկե, տվյալ ռազմավարությամբ հանրային գիտակցության վրա ազդելու միտումը:

Դիսկուրսի հարցում լայն մոտեցում են ցուցաբերում նաև Ֆերկլաֆը և Վոդակը, որոնք նույնպես դիսկուրսը գիտելիքների դրսևորման հատուկ ձև են համարում (Fairclough, Wodak, 1997: 261):

Եվ այսպես, չի կարելի չնկատել, որ դիսկուրսն իրոք բարդ միավոր է, որում ներգրավված են ինչպես բուն լեզուն, այնպես էլ խոսքային գործունեությունն ապահովող ճանաչողական կառույցներն ու արտալեզվական գործոնները:

Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ դիսկուրսի հիմնական բնութագրիչներն առավելապես արտացոլված են հատկապես քաղաքական դիսկուրսում: Եվ միանգամայն իրավացի է Գրաբերը (1981:195–224), որի մեկնությամբ՝ դիսկուրսը համարվում է քաղաքական, քանի դեռ շփումն իրականացվում է քաղաքական նպատակներով: Այս կարծիքը կիսում է նաև վան Դեյքը՝ նշելով, որ

Եթե դիսկուրսը քաղաքական սուբյեկտների կողմից իրականացվում է քաղաքական համատեքստում, բայց խոսակցությունը ոչ քաղաքական է, ապա այն չի կարող դիտարկվել որպես քաղաքական դիսկուրս (Dijk, 1997: 11–52): Քաղաքական դիսկուրսի շեյգայան ըմբռնմամբ՝ դիսկուրսը կարող է համարվել քաղաքական, երբ ձևավորված խոսքի առարկան, հասցեատերը կամ բովանդակությունը գտնվում են քաղաքականության ոլորտում (Шейгал, 2000):

Վերը շարադրվածը ակնհայտորեն ցույց է տալիս, որ քաղաքական դիսկուրսը բարդ նշանային համակարգ է՝ կազմավորված դիսկուրսիվ, մշակութային և գաղափարական բաղադրիչներից, ընդ որում եթե դիսկուրսիվ բաղադրիչը ենթադրում է լեզվական միջոցների ընտրություն՝ ելնելով ժանրի առանձնահատկություններից, ապա մշակութային բաղադրիչն արտահայտում է մշակույթի խորը իմաստային դաշտ, իսկ գաղափարականը փոխկապակցված է արժեքների, գաղափարների, քաղաքական գործչի քաղաքական դիրքորոշումն արտահայտող հրամայականների հետ (Иванова, 2011: 61):

Հատկանշական է, որ քաղաքական դիսկուրսն առավել հստակորեն է արտացոլում և առկայացնում հանրային գիտակցությունը, հետևաբար, ինչպես Բեյլին է նշում, այն կոչված է հասցեատեր լսարանին ներշնչելու և խրախուսելու որևէ քաղաքական գործողության անհրաժեշտություն (Bayley, 1985: 104):

Քաղաքական դիսկուրսի գործառույթների հետ կապված տեսակետներն, իհարկե, նույնպես միանշանակ չեն: Ընդունված է հիմնական գործառույթներ համարել իշխանության նվաճումն ու ամրապնդումը, որոշակի քաղաքական իրավիճակներին գնահատական տալն ու դրա հանդեպ լսարանի կարծիքի ձևավորումը: Նշված գործառույթներն, անկասկած, քաղաքական դիսկուրսի հետ ուղղակի կապ ունեն, սակայն դրանք ամբողջությամբ չեն ընդգրկում հասարակության մեջ քաղաքական հաղորդակցության ազդեցության և գործունեության շրջանակը:

Քաղաքական դիսկուրսի գործառույթների վերաբերյալ առավել լայն դիտարկումներով է հանդես գալիս Վոդակը: Լեզվաբանը քաղաքական դիսկուրսի հիմնական գործառույթների շարքին է դասում նաև պերսուազիվ, որը միտված է ստեղծելու ավելի լավ աշխարհի համոզիչ պատկերը, տեղեկատվական և փաստարկային գործառույթները (Водак, 1997: 139):

Քաղաքական դիսկուրսի գործառույթների վերաբերյալ հետաքրքիր դիտարկումներ կարելի է նկատել նաև Շեյգալի ուսումնասիրություններում: Լեզվաբանն առանձնացնում է հետևյալ գործառույթները՝

- հանրային վերահսկողության գործառույթը, որը ենթադրում է հասարակության գիտակցության մտաշահարկում,
- իշխանությունը լեզվափոխումներով գործառույթը, որը կոչված է հիմնավորելու քաղաքական որոշումները,

- սոցիալական համերաշխության գործառույթը, ըստ որի, անհատը հանդիսանում է հասարակության կամ որոշակի սոցիալական խմբի մաս,
- սոցիալական տարբերակման գործառույթը, որը հակադրվում է նախորդ գործառույթին և ենթադրում է անհատի առանձնացում հասարակությունից կամ որոշակի սոցիալական խմբից,
- իշխանության վերարտադրման գործառույթը, որը պատասխանատու է քաղաքական համակարգի նկատմամբ վստահության ամրապնդման համար,
- աշխարհի քաղաքական պատկերի ստեղծման գործառույթը,
- որոշակի գործողության դրդման գործառույթը (Шейгал 2004: 143):

Եթե փորձենք վերը թվարկված գործառույթներում առանձնացել մեկ ընդհանուր գիծ, ապա, լայն իմաստով, դա կլինի ներգործումը: Իսկ հասցեատիրոջ վրա ակտիվ ներգործման հիմնական մեթոդներից մեկը համոզումն է՝ պերսուազիան: Պերսուազիան սահմանվում է որպես բանավոր կամ գրավոր հաղորդագրության հեղինակի որոշակի ազդեցություն հասցեատիրոջ վրա՝ նրան ինչ-որ բանում համոզելու, որոշակի գործողությունների մղելու կամ չմղելու կոչ անելու նպատակով: Պերսուազիայի գործառույթ իրականացնող հաղորդակցման գործընթացն ուղղված է հասցեատիրոջ (հասցեատերերի խմբի) ընկալման մեջ որոշակի տեսակետներ, վերաբերմունք և վարքագիծ

ձևավորելուն: Ինչպես նկատում է Վ. Չերնյավսկայան, պերսուազիայի գործառույթ իրականացնող հաղորդակցության ժամանակ հարկ է հստակ տարբերակել հաղորդակցական-գործարանական երկու նպատակ՝ ազդել հասցեատիրոջ գիտակցության, վերջինիս կարծիքների, գնահատականների վրա և դրդել հասցեատիրոջը որոշակի գործողություններ կատարելու՝ այս կամ այն կերպ փոխելով կամ ուղղորդելով վերջինիս վարքագիծը (Чернявская, 2005: 65):

Պերսուազիան ուսումնասիրող հետազոտողները հակված են կարծելու, որ ներգործման իրականացման համար երկու հնարավոր տարբերակ կա՝ ինտելեկտուալ, այսինքն՝ հիմնված ռացիոնալ փաստարկների վրա, և աֆեկտիվ՝ հիմնված երևակայության վրա, այսինքն՝ սուբյեկտիվ հուզական գնահատականների վրա: Այլ կերպ՝ պերսուազիան ենթադրում է ցանկալի նպատակին հասնել ռացիոնալ հիմնավորմամբ՝ չբացատրելով, այլ ընդհակառակը, ենթադրելով ազդեցության հուզական-գնահատման միջոցները, այսինքն՝ սուբյեկտիվ գործոնները:

Ակնհայտ է, որ պերսուազիայի գործառույթը բնորոշ է տարբեր դիսկուրսների, և դրսևորման ուժգնությունը տարբերվում է՝ կախված հենց դիսկուրսից: Օրինակ՝ հրապարակախոսական ոճին առավել բնորոշ է ներգործման ու համոզման միջոցով որոշակի կարծիքի ձևավորումը: Գիտական հաղորդակցության մեջ ևս տեսանելի է համոզման առաջատար դերը, քանի որ գիտական տեքստի հեղինակը, որոշակի գաղափարների զարգացմանը

գուզնթաց, համոզում է ընթերցողին դառնալու իր գիտական մտածողությանը հաղորդակից:

Որքան էլ խոսքում պերսուազիայի գործառույթը հստակ դրսևորվի, այնուամենայնիվ դժվար է տարբերակել համոզման առանձին ոճ կամ դիսկուրս: Ինչպես նկատում է Գոնչարովան, պերսուազիան իբրև տեքստի գործառույթային-գործաբանական բնորոշիչ, կարող է դիտարկվել և՛ որպես որոշ լեզվական միավորների պոտենցիալ գործաբանական իմաստ կամ գործառույթ (ինչպես օրինակ հրամայական կառույցներում), և՛ որպես տեքստերի որոշ տեսակների ընդհանուր գործառույթային առանձնահատկություն (Гончарова, 2000: 125):

**Քաղաքական դիսկուրսում պերսուազիվ ռազմավարության
կառուցման
լեզվական մեխանիզմները**

Քաղաքական տեքստերում պերսուազիան իրագործվում է ընդհանուր ոճական միջոցների և հնարների կիրառությամբ, երբ գործի է դրվում լեզվական տարբեր երևույթների (բառազիտական, քերականական, ոճական) ներգործման մեծ ներուժը: Ինչպես նկատում է Առնոլդը, վերոհիշյալ լեզվական միավորները՝ առկայացվելով քաղաքական հաղորդակցության տեքստում, ձեռք են բերում պերսուազիայի (համոզման) գործառույթ (Арнольд, 2002: 95-145):

Չերնյավսկայան, որի կարծիքով պերսուազիան հարկ է դիտարկել որպես քաղաքական դիսկուրսի նպատակների իրականացման հիմնաքարային միջոց, փորձում է համակարգված ներկայացնել համոզման հիմնական մարտավարությունը: Նա համոզված է, որ այդ մարտավարության կարևորագույն բաղադրիչներն են դրական ինքնաներկայացումը, որը տեքստում սովորաբար զուգորդվում է «յուրայիններ» հասկացության բառագիտական-իմաստաբանական դաշտ ստեղծելու տեխնիկայի հետ, հակառակորդ ուժի արժեզրկումը՝ զուգորդված «օտարներ» հասկացության բառագիտական-իմաստաբանական դաշտ ստեղծելու տեխնիկայի հետ, հասցեատիրոջ հետ անմիջական շփման էֆեկտի ստեղծումը, գոյություն ունեցող երևույթներն ակնհայտ դարձնելու տպավորության ստեղծումը, խոստումները և պատրաստի լուծման առաջարկները (Чернявская, 2005: 67):

Դրական ինքնաներկայացման և հակառակորդ ուժի արժեզրկման մարտավարությունը գերիշխող է ողջ քաղաքական դիսկուրսի մեջ և առկայացնում է քաղաքական հաղորդակցության «յուրայիններ» և «օտարներ» երկատումը: Լեզվական միջոցները, որոնց օգնությամբ իրականացվում է առկայացումը, բազմազան են, սակայն ամենատարածված տեխնիկան «մենք» դերանվան ներառական կիրառությունն է: Ինչպես նկատում է Ն. Ֆերքլաֆը, այս անձնական դերանվան կիրառության ժամանակ երբեք պարզ չէ, թե հստակ կերպով ովքեր են ներառված այդ «մենք»-ի մեջ: Լեզվաբանը նշում է, որ հոգնակի թվի առաջին դեմքի դերանունը ծառայում է

որպես խոսողի և լսողի միջև հոգեբանական մերձեցում ստեղծելու միջոց՝ նպաստելով համագործակցության և վստահության մթնոլորտի ձևավորմանը, ուստի այն կիրառվում է ավելի հաճախ, քան մյուս անձնական դերանունները (Fairclough, 2000: 178-179): Իհարկե, չի կարելի հաշվի չառնել այն հանգամանքը, որ «մենք» դերանունը կարևոր դեր է կատարում նաև համագործակցության ռազմավարության իրագործման գործընթացում: Այսպես՝

Depuis plusieurs jours, nous assistons au retour de la guerre en Europe. Nous devons rester unis face à ces événements.

Nous continuerons de défendre nos valeurs démocratiques et la souveraineté des peuples.

Nous prendrons toutes les décisions nécessaires pour protéger nos citoyens et préserver notre indépendance. Nous le ferons avec nos partenaires européens, parce que nous partageons un même destin. (Adressé aux Français sur la guerre en Ukraine, mars 2022) (<https://www.elysee.fr/emmanuel-macron/2022/03/02/adresse-aux-francais-ukraine>)

Էմանուել Մակրոնի ելույթի այս հատվածում «մենք» անձնական դերանունը կենտրոնական դեր է խաղում խոսնակի համոզման ռազմավարության մեջ: Նախագահը բազմիցս օգտագործում է «մենք + բայ» շարահյուսական կառույցը, ինչպես օրինակ՝ «մենք պետք է միասնական մնանք», «մենք կշարունակենք պաշտպանել մեր

արժեքները» և «մենք կկայացնենք բոլոր անհրաժեշտ որոշումները» արտահայտություններում: Այս կրկնությունը ստեղծում է հռետորական հարակրկնություն և քաղաքական ուղերձին մոբիլիզացնող ռիթմ հաղորդում:

Իմաստաբանական առումով՝ «մենք» դերանունն այս հատվածում ներառական արժեք ունի: Այն միաժամանակ վերաբերում է նախագահին, Ֆրանսիայի կառավարությանը, քաղաքացիներին և, որոշ հատվածներում, եվրոպական հանրությանը: Այսօրինակ ընդլայնման միջոցով խոսնակը կառուցում է ճգնաժամին բխվող միասնական քաղաքական համայնքի պատկեր: Դիսկուրսի պերսուազիվ գործառնության իրացման տեսանկյունից, լեզվական այս ռազմավարության կիրառմամբ նրան հաջողվում է աշխարհաքաղաքական խնդիրը վերածել, հավաքական մարտահրավերի: Հանրությունն այլևս պարզապես իրադարձությունների դիտորդ չէ, այլ խորհրդանշորեն դառնում է քաղաքական գործողությունների մասնակից: Հետևաբար՝ «մենք» դերանունն այստեղ ծառայում է ազգային և եվրոպական համերաշխության ամրապնդմանը՝ միաժամանակ բարձրացնելով նախագահական ելույթի հեղինակությունը:

Ստորև բերվող անգլալեզու հատվածը ԱՄՆ նախկին նախագահ Ջո Բայդենի ելույթից է՝

Two years ago, our economy was reeling. But tonight, we can say clearly that the state of the Union is strong. We are rebuilding our economy,

creating jobs, and investing in the future. We are protecting democracy and standing with our allies. And we are proving that when we work together, nothing is beyond our reach.

(President Biden's State of the Union Address, February 07, 2023)
(<https://www.voanews.com/a/transcript-president-biden-s-2023-state-of-the-union-address/6953032.html>)

Այս ուղերձում «մենք» անձնական դերանունը նախագահ Ջո Բայդենի դիսկուրսիվ ռազմավարության կենտրոնական տարրն է: Քննարկվող հատվածում «մենք + բայ» շարունակական կառույցը կրկնվում է մի քանի անգամ, ինչպես *We are rebuilding our economy* (մենք վերակառուցում ենք մեր տնտեսությունը) և *We are protecting democracy* (մենք պաշտպանում ենք ժողովրդավարությունը) արտահայտություններում: Այս քերականական կառույցը ընդգծում է շարունակական գործողությունների գաղափարը և էլույթը դնում առավել դինամիկ չափումների մեջ:

Իմաստաբանական տեսանկյունից «մենք» դերանունը ներառական բնույթ ունի: Այն միաժամանակ վերաբերում է ամերիկյան կառավարությանը, ժողովրդավարական ինստիտուտներին և բոլոր քաղաքացիներին: Այս լայն ներառումը խոսնակին թույլ է տալիս քաղաքական նվաճումները ներկայացնել որպես ոչ թե մեկ վարչակազմի գործողությունների, այլ կոլեկտիվ ջանքերի արդյունք: Այսպիսով՝ համոզման ռազմավարությունը հիմնված է համատեղ հաջողության կառուցման վրա, որը

խորհրդանշորեն վերագրվում է ազգ/լսարանի յուրաքանչյուր անդամի:

Շարունակելով դրական ինքնաներկայացման թեման՝ դիտարկենք մեկ այլ միջոց, որով տեսքտի հեղինակ քաղաքական գործիչն իր կամ իր քաղաքական ուժին ներկայացնում է այնպիսի բառապաշարով, որը բացի դրական հարիմաստությունից, արտահայտում է նաև կարևոր ազգային և համամարդկային արժեքներ՝ ազատություն, խաղաղություն, առաջընթաց, արդարադատություն և այլն: Համապատասխանաբար, հակառակորդ ուժի հիշատակումը տեղի է ունենում իմաստաբանական տեսանկյունից հակապատկեր ներկայացնող համատեքստում: Քաղաքական դիսկուրսի քննադատական վերլուծության շրջանակում ինքնաներկայացումը դիտարկվում է որպես իշխանության լեգիտիմացման հիմնարար ռազմավարություն (Fairclough, 1995; van Dijk, 1998): Այն ուղղակիորեն համընկնում է վան Դեյքի առաջարկած «գաղափարախոսական քառակուսու» (Ideological Square) ճանաչողական մոդելի հետ, որի համաձայն գաղափարախոսական դիսկուրսը կառուցվում է ներխմբային («մենք») դրական և արտախմբային («նրանք») բացասական ներկայացումների համակարգված հակադրության միջոցով (van Dijk, 1998 : 267): Ձևավորվում է մի ռազմավարություն, որի համաձայն՝ գաղափարախոսական դիսկուրսը կառուցվում է գնահատողական բևեռացման սկզբունքով. ներխմբային ինքնությունը համակարգված կերպով ներկայացվում է դրական իմաստաբանական և

արժեքաբանական բառապաշարով, մինչդեռ արտախմբային սուբյեկտը բնութագրվում է բացասական գնահատականներով: Միաժամանակ համապատասխան քերականական և շարահյուսական հնարների կիրառմամբ՝ ներխմբին վերաբերող բացասական իրողությունները սահմանափակվում կամ լռեցվում են, այն դեպքում երբ արտախմբի դրական կողմերը նվազեցվում են կամ անտեսվում: Ստորև ներկայացվում է այս մեխանիզմի միկրովերլուծությունը՝ ֆրանսալեզու և անգլալեզու ելույթների օրինակներով:

La République, c'est un idéal. C'est un projet qui nous rassemble, qui est fondé sur des valeurs: liberté, égalité, fraternité. Et chaque fois que ces valeurs sont mises en cause, quand la justice ou la liberté sont remis en question, nous devons les défendre avec force et détermination.
(Déclaration de M. Emmanuel Macron, président de la République, en hommage à Jean Moulin, à Lyon le 8 mai 2023.) (<https://www.vie-publique.fr/discours/289381-emmanuel-macron-08052023-hommage-jean-moulin>)

Եթե բերված հատվածը դիտարկելու լինենք բառագիտական մակարդակում, ապա կնկատենք, որ *liberté, égalité, fraternité* (ազատություն, հավասարություն, եղբայրություն) բառերը, ընտրված են դասական հանրապետական արժեքները ներկայացնելու համար և համարվում են Ֆրանսիայի ժողովրդավարության խորհրդանիշներ: Բառերը ոչ միայն հիմնական արժեքային

նշանակություն ունեն, այլև ամփոփում են պատմական, գաղափարական ավանդույթ: Իմաստաբանական վերլուծության տեսանկյունից *Chaque fois que ces valeurs sont mises en cause... (Ամեն անգամ, երբ այս արժեքները կասկածի տակ են դրվում...)* նախադասության միջոցով ստեղծում է համակարգային վտանգի տպավորություն, և հանրապետության համար հիմնաքարային արժեքների վտանգի ընդգծումն ապահովում է համախմբող պատում, որը միտված է հասարակությանը ներգրավելու ընդհանուր գործի մեջ: Նկատում ենք նաև բազմակի շարադրանք, երբ պարբերաբար կրկնվում են valeurs, liberté (*արժեքներ, ազատություն*) բառերը: Եթե փորձենք վերը հիշատակված պարբերությունը տեղադրել վան Դեյքի գաղափարախոսական քառակուսու մոդելի մեջ, ապա վերլուծությունը ցույց կտա, որ ներխմի դրական արժևորումն իրագործվում է *liberté, égalité, fraternité, idéal, projet* (*ազատություն, հավասարություն, եղբայրություն, իդեալ, նախագիծ*) բառերի միջոցով: Արտախմբային բացասական ներկայացումը տեղի է ունենում վերը քննարկված համակարգային վտանգի տպավորության ստեղծմամբ, և այդ վտանգի վերաբերյալ տեղեկատվության փոխանցումը կատարում է *mises en cause* (*կասկածի տակ են*) արտահայտությունը՝ դառնալով իմաստակիր կենտրոն:

Ստորև քննարկվող անգլալեզու օրինակը ԱՄՆ նախկին նախագահ Ջո Բայդենի 2022 թվականի սեպտեմբերի 1-ի ելույթից է՝

We're in a battle for the soul of this nation— a battle for the very essence of who we are as Americans. This is not hyperbole. This is reality. We must defend our democracy, uphold the rule of law, protect the right to vote, and reject the politics of fear and division. If we don't, we risk losing what makes America America: the promise that all are created equal and endowed with unalienable rights. (Remarks by President Biden on the Continued Battle for the Soul of the Nation, 1 September 2022.) (<https://www.democracyinaction.us/2022/biden090122spt.html>)

Բառազիտական մակարդակում *battle for the soul of this nation* (պայքար ազգային ոգու համար) փոխաբերական արտահայտությամբ առաջին պլան է մղվում ապագայի կարևոր առանցք հանդիսացող ժողովրդավարական արժեքի համար պայքարը: *Defend, protect, stand up for* (պաշտպանել) բայերի կիրառությունը ևս պատահական չէ: Դիտարկվող երեք բայերն նույն *պաշտպանել* իմաստն ունեն, ուստի՝ դրանց կիրառությամբ (անկախ այն հանգամանքից, որ հանդես են գալիս տարբեր արտահաստություններում են), ստեղծվում է կրկնություն, ինչն ավելի է ընդգծում ազգային արժեքների պահպանողական միտումը խոսքում՝ միաժամանակ պահպանելով ելույթի դինամիկան: Նկատում ենք նաև, որ նախագահի հաղորդակցումն ինչ-որ չափով պարտադրանքի տեսք է ստանում *We must* (մենք պետք է) մոդալ կառույցի շնորհիվ: Վերջինիս կիրառությամբ ստեղծվում է համախմբող ներգործություն, առաջարկվող գործողությունները

ներկայացվում են որպես միակ լուծում և ճանապարհ, իսկ պատասխանատվությունը դառնում է միասնական:

Քաղաքական խոսույթում առաջին դեմքի եզակի թվի անձնական «ես» դերանունը դրական ինքնաներկայացման հիմնական լեզվական ռեսուրսներից մեկն է: Այն լեզվականորեն ներկայացնում է առաջնորդին որպես պատասխանատու, գիտելիքի կրող, նախաձեռնող և բարոյական սուբյեկտ: Առաջին դեմքի եզակի թվի դերանունը ծառայում է ոչ միայն որպես խոսողին նույնականացնելու միջոց, այլև կարևոր է հոգեբանական և արժեքաբանական առումներով:

Դիտարկենք հետևյալ հատվածը՝

I believe America is big enough for all of us to succeed... And that is the nation we're building... We must defend our democracy, uphold the rule of law, protect the right to vote... I will not allow extremism to define us...

/President Joe Biden Remarks on the Continued Battle for the Soul of the Nation Independence National Historical Park Philadelphia, Pennsylvania September 1, 2022// <https://www.democracyinaction.us/2022/biden090122spt.html> /

Բերված հատվածում նախագահ Բայդենը “I – ես” դերանունն օգտագործում է հատկապես այն դեպքերում, երբ խոսում է պետականության համար մեծ կարևորություն ունեցող արժեքներից՝ *democracy, right to vote* և այլն: Ավելին՝ *I will not allow* (Ես թույլ չեմ տա) արտահայտությամբ նա նկատել է տալիս, որ այդ կարևոր

արժեքներն անձամբ իր պաշտպանության տակ են: Ջգացմունքային կապ է ստեղծվում մի կողմից *believe* և *not allow* արտահայտությունների, իսկ մյուս կողմից ներխուժային արժեքների պաշտպանության միջև:

Ֆրանսապետու հատվածները նախագահ է. Մակրոնի երկու տարբեր ելույթներից են:

À l'issue d'une longue confrontation démocratique, vous avez choisi de m'accorder votre confiance... Je veux vous dire merci. Merci du fond du cœur. Ma gratitude va à tous ceux d'entre vous qui m'ont apporté leur suffrage et leur soutien... Je veux ce soir saluer le Président Hollande... Je veux que ce soit celle de l'espoir et de la confiance retrouvés. / Allocution de M. Emmanuel Macron, à l'annonce de son élection à la présidence de la République, 7 mai 2017 // <https://www.vie-publique.fr/discours/202851-allocution-de-m-emmanuel-macron-lannonce-de-son-election-la-presi/>

Այս հատվածում Մակրոնը ոչ միայն ներկայացնում է իր՝ քաղաքական գործչի դիրքորոշումը, այլև՝ ցուցադրում անձնական վերաբերմունք իրեն ձայն տված ընտրազանգվածի նկատմամբ: *Je veux vous dire* (Ես ցանկանում եմ ձեզ ասել) և *Je veux que ce soit* (Ես ցանկանում եմ, որ լինի) արտահայտությունները ցուցադրում են խոստովի՝ որպես գործողության նախաձեռնողի դերը: Մի դեպքում հստակ որոշում է, մյուս դեպքում, ըղձական կառույցի կիրառմամբ արտահայտում իր ցանկությունը:

Cependant, mes chers compatriotes, je veux vous le dire ce soir avec beaucoup de gravité... Je compte sur vous parce que le Gouvernement ne peut pas tout seul, et parce que nous sommes une nation... Je sais pouvoir compter sur vous. (Adresse aux Français, 12 mars 2020) / <https://www.elysee.fr/emmanuel-macron/2020/03/12/adresse-aux-francais>
/

Ուսումնասիրելով բերված հատվածը՝ կարող ենք նկատել, որ էլույթը համատեղ պատասխանատվության կոչ է: *Je compte sur vous* (Ես հույսս դնում եմ ձեզ վրա) արտահայտության *tu*-ը, որքան էլ նախագահի ձայնը ներկայացնի, այդուհանդերձ, նաև հավաքական իմաստ ունի և միավորում է խոսողին ու լսարանին՝ նրանց դարձնելով ընդհանուր արժեքներով առաջնորդվող *մենք*:

Այսպիսով, առաջին դեմքի եզակի թվի դերանվան ենթակայական գործածությունը, երբ այն հանդես է գալիս որպես գործողության մեջ վճռորոշ ներդրում ունեցող տարր, կարող է վկայել խոսողի ինքնադիրքավորման մասին: Մասնավորապես, այն հաճախ մատնանշում է խոսողի՝ լսարանի նկատմամբ վերադաս դիրք գրավելը, ավելի բարձր սոցիալական կարգավիճակի ցուցադրումը կամ սեփական իրավունքների իրացումը՝ հրահանգներ տալու և գնահատականներ պարտադրելու առումով: Հատկապես այն դեպքերում, երբ «ես»-ը համադրվում է կարծիք, կամք կամ գնահատանք արտահայտող բայերի հետ, այն դառնում է ոչ միայն

քերականական սուբյեկտ, այլև քաղաքական դաշտում իշխող դիրքի խոսույթի կրող և, այդպիսով, ազդեցություն է գործում հանրային ընկալումների վրա:

Յուրայիններ/օտարներ երկատման առկայացման կարևոր միջոց են նաև լեզվաոճական հնարները, մասնավորապես՝ փոխաբերությունները, որոնք կիրառվում են ի նպաստ քաղաքական տեքստի պերսուազիվ գործառույթի: Փոխաբերությունների խորքային շերտերում ամփոփված են այնպիսի իմաստային բաղադրիչներ, որոնք կարող են ազդեցություն ունենալ ցանկացած տեքստի լիարժեք և համակողմանի ընկալման վրա:

Պատահական չէ, որ Ա. Բարանովի փոխաբերության ճանաչողական տեսության հիմնարար դրույթներից մեկի համաձայն՝ փոխաբերականացման գործընթացների հիմքում ընկած են գիտելիքի կառուցարկման և իմաստային վերամշակման այնպիսի մեխանիզմներ, որոնք ապահովում են նոր կամ վերացական հասկացությունների արտահայտումն արդեն գոյություն ունեցող լեզվական իմաստների և կառուցվածքների միջոցով: (Баранов, 2014):

Վերը արդեն նշվել է, որ բառերն արտահայտում են մարդկանց մտքերն ու զգացմունքները և ազդեցություն են գործում խոսքային հաղորդակցության մասնակիցների մտածողության ու հուզական վիճակի վրա: Փոխաբերությունը ընթերցողի կամ զրուցակցի զգացմունքների վրա ազդելու կարևորագույն միջոցներից է: Փոխաբերական տեքստի իմաստը և դրա կիրառման նպատակները հաղորդակցության մեջ հասկանալու համար

մեկնաբանը/զրուցակիցը պետք է անցնի բավական բարդ վերլուծական ճանապարհ. սկսած բառարանային սահմանման ուսումնասիրությունից և ստուգաբանական աղբյուրներին դիմելուց մինչև խորքային իմաստների բացահայտում և խոսքային ռազմավարության որոշարկում, որով պայմանավորված է փոխաբերության կիրառումը և դրա ազդեցությունը հասցեատիրոջ հույզերի, վարքագծի և համոզմունքների վրա:

Հետևաբար՝ փոխաբերության «ապակոդավորմանը» պետք է հաջորդի դրա դերի պարզաբանման փուլը հաղորդակցական դաշտում, քանի որ վերլուծության վերջնական նպատակը փոխաբերությունների հնարավոր տարբերակների կիրառման բացահայտումն է դիսկուրսում: Այս համատեքստում Ա. Չուդինովը առանձնացնում է քաղաքական փոխաբերության մոդելների չորս դաս, որոնց հիմնական բովանդակությունը կարելի է ընդհանրացնել հետևյալ կերպ՝

1. *Անտրոպոմորֆ փոխաբերությունների մոդել*, որի շրջանակում մարդը քաղաքական իրականությունը մոդելավորում է իր սեփական կերպարի և փորձառության միջոցով: Քաղաքական գործընթացները և երևույթները մեկնաբանվում են մարդկային հատկությունների, վարքագծի և հոգեբանական առանձնահատկությունների համատեքստում, ինչի արդյունքում քաղաքականությունը ներկայացվում է մարդուն բնորոշ հատկանիշների միջոցով:

Դիտարկենք հետևյալ հատվածը Է. Մակրոնի ելույթից:

La nation pleure, la nation accompagne ceux qui sont marqués dans leur chair, mais la nation vit, se défend, se bat. Je pense, en cet instant, aux 17 000 soldats, marins et aviateurs qui sont actuellement déployés en opérations. À celles et ceux qui, dans les profondeurs des océans, ou en alerte depuis les bases aériennes, garantissent la permanence de la dissuasion. À celles et ceux qui assurent la protection terrestre, maritime, aérienne de notre métropole comme de nos outre-mers. (Discours d'Emmanuel Macron à l'Hôtel de Brienne, 13 juillet, 2019) / <https://www.elysee.fr/emmanuel-macron/2019/07/13/discours-aux-armees-a-lhotel-de-brienne/>

Ֆրանսիայի Հանրապետության նախագահի ելույթի այս հատվածում հանդիպող *La nation pleure, la nation accompagne ceux qui sont marqués dans leur chair, mais la nation vit, se défend, se bat* (Ազգը սգում է, ազգը աջակցում է նրանց, ովքեր իրենց մարմնի վրա կրում են այդ ցավի հետքերը, սակայն ազգը շարունակում է ապրել, պաշտպանվել և պայքարել) արտահայտության մեջ *nation* (ազգ) հասկացությունը ներկայացվում է որպես կենդանի և զգացող սուբյեկտ, որը բնութագրվում է մարդուն բնորոշ գործողություններով և հոգեբանական վիճակներով՝ *լացել, աջակցել, ապրել, պաշտպանվել, կռվել*: Այս լեզվական միավորները կարող են մեկնաբանվել որպես անտրոպոմորֆ փոխաբերության դասական դրսևորում, որտեղ քաղաքական կամ սոցիալական համակարգը մոդելավորվում է մարդկային փորձառության շրջանակներում:

Քաղաքական իրականության վերացարկված հասկացությունը՝ «պետությունը» կամ «ազգը», այստեղ հանդես է գալիս որպես անձնավորված կերպար, որը կարող է զգալ, արձագանքել և գործել: Նման հնարանքը նպաստում է, որ լարանը պետության և հասարակության միջև հարաբերակցությունը ընկալի ոչ թե որպես ինստիտուցիոնալ կառույցների համակցություն, այլ որպես միասնական «կենդանի մարմին», որի անդամներն են քաղաքացիները: Ակնհայտ է, որ անտրոպոմորֆ փոխաբերությունը քաղաքական դիսկուրսում ստեղծում է նույնականացման և համախմբման ազդեցություն՝ ներկայացնելով ազգը որպես միասնական սուբյեկտ:

2. *Բնության փոխաբերությունների մոդել*, որը ենթադրում է քաղաքական աշխարհի լեզվական պատկերի ձևավորում բնական երևույթների և գործընթացների միջոցով: Հայտնի է, որ կենդանի և անկենդան բնությունը վաղուց ծառայում է որպես մոդել, որի միջոցով մարդը պատկերացնում և բացատրում է սոցիալական, այդ թվում՝ քաղաքական իրականությունը:

We've been through tough storms before. But we came out stronger each time because the American people are resilient. Storms will come, but we know how to weather them. Together we will build an economy that grows from the bottom up and the middle out, not the top down. (President Biden's 2023 State of the Union Address, February 07, 2023)

[/https://www.presidency.ucsb.edu/documents/address-before-joint-session-the-congress-the-state-the-union-29/](https://www.presidency.ucsb.edu/documents/address-before-joint-session-the-congress-the-state-the-union-29/)

Այս հատվածում քաղաքական և տնտեսական դժվարությունները ներկայացվում են բնության երևույթի՝ *փոթորկի (storm)* փոխաբերության միջոցով: *Storms will come, but we know how to weather them* արտահայտության մեջ հասարակական և տնտեսական ճգնաժամերը մոդելավորվում են որպես ժամանակ առ ժամանակ առաջացող բնական աղետներ, որոնց, այնուամենայնիվ հնարավոր է դիմակայել:

3. *Սոցիոմորֆ փոխաբերությունների մոդել*, որը կիրառվում է, երբ սոցիալական աշխարհի տարբեր բաղադրիչներ մարդու գիտակցության մեջ մշտապես փոխազդելով միմյանց հետ՝ օգնում է փոխաբերականացնել քաղաքականության ոլորտը՝ մարդու սոցիալական գործունեության այլ ոլորտների (տնտեսություն, ընտանիք, կրթություն և այլն) օրինակով: Դիտարկենք հետևյալ օրինակը՝

The shared journey toward peace on the Korean Peninsula, toward cooperation with Northeast Asia, and finally toward cooperation around the world — that's the journey we're on together. A journey we've already embarked upon, and we could not have any better partner to share that journey with. (Remarks by Vice President Joe Biden on U.S.-Korea Relations and the Asia-Pacific, December 06, 2013) / <https://obamawhitehouse.archives.gov/the-press->

[office/2013/12/06/remarks-vice-president-joe-biden-us-korea-relations-and-asia-pacific/](https://www.whitehouse.gov/the-press-office/2013/12/06/remarks-vice-president-joe-biden-us-korea-relations-and-asia-pacific/)

Քաղաքական գործիչների ելույթներում միջազգային հարաբերությունները հաճախ ներկայացվում են սոցիալական հարաբերություններն արտացոլող փոխաբերության միջոցով: Ջո Բայդենի ելույթում ԱՄՆ-Կորեա հարաբերությունների մասին նշվում է՝ *a journey we've already embarked upon, and we could not have any better partner to share that journey with* (մի ճանապարհորդություն, որը մենք արդեն սկսել ենք, և ճանապարհը միասին անցնելու համար չենք կարող պատկերացնել ավելի լավ գործընկեր) արտահայտությամբ, ընդ որում միջազգային այս քաղաքական հարաբերությունները ներկայացվում են որպես մարդկային սոցիալական փոխգործակցությանը բնորոշ գործընկերային հարաբերություններ: Պետությունները ներկայացվում են որպես գործընկերներ, որոնք համատեղ ճանապարհ են անցնում և ընդհանուր նպատակների հասնելու համար երկուստեք են կրում պատասխանատվությունը:

Այսպիսի ձևակերպումները հատկապես արդյունավետ են միջազգային համագործակցության համատեքստում, քանի որ *partner* (գործընկեր) և *shared journey* (համատեղ ճանապարհորդություն) հասկացությունները ենթադրում են փոխվստահություն, փոխադարձ աջակցություն և համատեղ գործողություն:

4. Արտեֆակտային (կամ տեխնոմորֆ) փոխաբերությունների մոդել, որի գործարկումը միանգամայն արդյունավետ է, երբ քաղաքական իրականությունը մեկնաբանվում և ներկայացվում է մարդու ստեղծած առարկաների, մեխանիզմների կամ տեխնիկական համակարգերի օրինակով: Իրոք, գաղտնիք չէ, որ մարդը հաճախ ինքնարտահայտվում է իր իսկ ստեղծած նյութական առարկաների՝ արտեֆակտերի միջոցով (Чудинов, 2003:194):

Ստորև բերվող օրինակում, որը քաղված է Ֆրանսիայի նախագահի՝ պետական համակարգում Սահմանադրության դերին նվիրված 2018 թ. էլույթից, քաղաքական համակարգը ակնհայտորեն ներկայացվում է տեխնիկական մեխանիզմի տեսքով:

Une Constitution est tout à la fois source du pouvoir, recueil des libertés et valeurs fondamentales, grammaire des mécaniques institutionnelles. Le Président de la République doit veiller sur cet héritage et maintenir vivante l'énergie originelle de 1958. (Discours du Président, Emmanuel Macron au Conseil Constitutionnel, le 5 octobre, 2018) / <https://www.elysee.fr/emmanuel-macron/2018/10/05/transcription-du-discours-du-president-emmanuel-macron-au-conseil-constitutionnel/> /

Une Constitution est... grammaire des mécaniques institutionnelles (Սահմանադրությունը... ինստիտուցիոնալ մեխանիզմների քերականությունն է) արտահայտության մեջ *mécaniques institutionnelles* ձևակերպումը ենթադրում է, որ

պետական կառույցները գործում են ինչպես փոխկապակցված մեխանիկական մասեր, որոնց աշխատանքը կարգավորվում է որոշակի կանոններով: Միաժամանակ *grammaire* (քերականություն) բառը մատնանշում է այդ համակարգի կանոնակարգային բնույթը: Այս փոխաբերական մոդելը քաղաքական դիսկուրսում իրականացնում է համակարգայնացման գործառույթ: Քաղաքական կառավարման բարդ գործընթացները ներկայացվում են որպես տեխնիկական համակարգ, որի արդյունավետությունը կախված է մասերի պահպանումից:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է եզրակացնել, որ փոխաբերությունը քաղաքական դիսկուրսի կարևորագույն կառուցակարգերից մեկն է, որն ապահովում է ոչ միայն խոսքի պատկերավորությունն ու արտահայտչականությունը, այլև իրականացնում է հզոր ներգործություն հասարակական գիտակցության վրա: Քաղաքական խոսքում փոխաբերությունների կիրառումը հնարավորություն է տալիս վերացական, բարդ և հաճախ դժվար ընկալելի քաղաքական գործընթացներն ու երևույթները ներկայացնել առավել մատչելի, պատկերավոր և հուզականորեն ազդեցիկ: Այդ կերպ քաղաքական առաջնորդները ոչ միայն փոխանցում են տեղեկատվություն, այլև ձևավորում են լսարանի վերաբերմունքը, արժեքային կողմնորոշումները և քաղաքական իրականության ընկալման ձևերը: Փոխաբերության արդյունավետությունը պայմանավորված է նրանով, որ այն հիմնվում

է մարդու առօրյա փորձառության, ճանաչողական մեխանիզմների և աշխարհընկալման վրա: Հենց այդ պատճառով քաղաքական դիսկուրսում լայնորեն կիրառվում են այնպիսի փոխաբերական մոդելներ, որոնք քաղաքական իրականությունը մեկնաբանում են մարդու, բնության, սոցիալական հարաբերությունների կամ տեխնիկական համակարգերի միջոցով:

Եզրակացություն

Վերը շարադրվածը թույլ է տալիս եզրակացնել, որ քաղաքական դիսկուրսը, որն արտացոլում է լեզվի և քաղաքականության փոխկապակցվածությունը, ժամանակակից լեզվաբանական ուսումնասիրությունների կարևոր ուղղություններից է: Քաղաքական հաղորդակցության շրջանակում լեզուն հանդես է գալիս որպես ոչ միայն տեղեկատվության փոխանցման միջոց, այլև գաղափարների տարածման, հասարակական կարծիքի ձևավորման և քաղաքական ազդեցության իրականացման գործիք:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քաղաքական դիսկուրսը բազմաշերտ հաղորդակցական համակարգ է, որը ներառում է լեզվական, մշակութային և գաղափարական բաղադրիչներ: Այս համակարգում լեզվական միջոցների ընտրությունը պայմանավորված է ինչպես հաղորդակցության թեմայով, այնպես էլ խոսողի քաղաքական նպատակներով, լսարանի առանձնահատկություններով և սովյալ սոցիալ-քաղաքական

իրավիճակով: Քաղաքական դիսկուրսի համար հատկանշական առանձնահատկություններից է ներգործման և համոզման (պերսուազիվ) գործառույթների առկայությունը: Լեզվական տարբեր ռազմավարությունների գործադրմամբ՝ քաղաքական գործիչները փորձում են ազդել լսարանի գիտակցության, գնահատականների և վարքագծի վրա: Դրանց թվում առանձնահատուկ դեր ունեն դրական ինքնաներկայացման և հակառակորդի արժեզրկման ռազմավարությունները, որոնք հաճախ իրականացվում են «մենք» և «նրանք» գաղափարական հակադրության միջոցով: Բացի այդ, քաղաքական խոսույթում լայնորեն կիրառվում են տարբեր փոխաբերական մոդելներ՝ հնարավորություն տալով բարդ քաղաքական գործընթացները ներկայացնելու ավելի հասկանալի և պատկերավոր ձևով՝ ուժեղացնելով հաղորդակցության ներգործական ազդեցությունը:

Այսպիսով՝ քաղաքական դիսկուրսի ուսումնասիրությունը թույլ է տալիս բացահայտել այն լեզվական և գաղափարական մեխանիզմները, որոնց միջոցով ձևավորվում են քաղաքական պատկերացումները և ազդեցություն է իրականացվում հանրային գիտակցության վրա: Քաղաքական լեզվի և դիսկուրսի վերլուծությունը կարևոր գործիք է քաղաքական հաղորդակցության կառուցվածքն ու գործառույթները հասկանալու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Bayley P. Live oratory in the television age: The language of formal speeches / P. Bayley // Campaign language: Language, image, myth in the U.S. presidential elections 1984. – Bologna : Cooperativa Libraria Universitaria Editrice Bologna, 1985, 77–174.
2. Chilton P. Politics as Text and Talk - Analytical Approaches to Political discourse / P. Chilton C. Schäffner. Amsterdam : John Benjamins Publishing Company, 2002.
3. Fairclough, N. Critical discourse analysis / N. Fairclough., R. Wodak // Discourse as social interaction. London : Sage Publications, 1997, 258–284.
4. Fairclough, N. New Labour, New Language? / N. Fairclough. London and New York : Routledge, 2000, 178.
5. Graber D. Political languages / D.A. Graber // Handbook of Political Communication / Ed. D. Nimmo, K. Sanders, Beverly Hills: Sage, 1981.
6. Van Dijk T. What is political discourse analysis? / T.A. van Dijk // Political linguistics. –Amsterdam : Benja-mins, 1997.
7. Van Dijk T. Ideology: A multidisciplinary approach. London, England UK: Sage Publications, 1998.
8. Арнольд И. Стилистика современного английского языка, Москва, 2002.
9. Арутюнова Н. Дискурс // Лингвистический энциклопедический словарь. М., 1990, 136–137.
10. Баранов А. Дескрипторная теория метафоры. М.: Языки славянской культуры, 2014.

11. Баранов А. Парламентские дебаты: традиции и новации, Москва, Знание, 1991.
12. Борботько В. Принципы формирования дискурса: От психолингвистики к лингвосинергетике. М.: Книжный дом «ЛИБРОКОМ», 2011.
13. Водак Р. Язык. Дискурс. Политика / Р. Водак ; пер. с англ. и нем. В.И. Карасика и Н.Н. Трошиной ; Волгогр. гос. пед. ун-т, Науч.-исслед. лаб. "Язык и личность". – Волгоград: Перемена, 1997.
14. Гончарова Е. Персуазивность и способы ее языковой реализации в дискурсе рекламы. *Studia linguistica*. Вып. 10. СПб., 2000.
15. Гийом Ж., Мальдидье Д. О новых приёмах интерпретации, или проблема смысла с точки зрения анализа дискурса. М.: Прогресс, 1999, 124 -136.
16. Дейк Т. ван. Язык. Познание. Коммуникация. М. : Прогресс, 1989.
17. Иванова, С. Тенденции развития и исследования современного политического дискурса / С.В. Иванова // Актуальные проблемы контрастивной лингвистики, типологии языков и лингвокультурологии в полиэтническом пространстве : сборник научных статей : Уфа : Башкирский государственный университет, 2011, 58–67.
18. Карасик В. Языковые ключи. М.: Гнозис, 2009.
19. Нарумов Б. «Архитектура языка» в концепции Э. Косериу URL: <http://danefae.org/pprs/venedikt/narumov.htm> (06.12.2025)
20. Норман, Б. Лингвистическая прагматика (на материале русского и других славянских языков) : курс лекций / Б.Ю. Норман. - Минск : БГУ 2009.

21. Паршин П. Об оппозиции системоцентричности и антропоцентричности применительно к политической лингвистике, Редакция журнала Диалог со временем, 2000.
22. Чернявская В. Логинова И. Программа политической партии как персуазивный текст. Известия РГПУ им. А. И. Герцена, Санкт-Петербург, 2005, 64-75.
23. Чудинов А. Политическая лингвистика (общие проблемы, метафора): Учебное пособие. Екатеринбург, 2003, 194
24. Чудинов А. Политическая лингвистика : учебное пособие / А.П. Чудинов. – 3-е изд., испр. М. : Флинта: Наука, 2008.
25. Шейгал Е. Семиотика политического дискурса : дис. ... д-ра филол. наук. Волгоград, 2000, 368.
26. Шейгал, Е. Семиотика политического дискурса : дис. ... д-ра филол. наук. Волгоград, 2000.
27. Шейгал Е. Семиотика политического дискурса. М.: ИТДГК Гнозис, 2004.
28. Գաապարյան, Ս.Ք. Տեքստ, դիսկուրս, մեկնաբանություն: // Լեզու, խոսք, իրականություն: Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու: Երևան, ԱԶ «Արման Ասմանգուլյան», 2017, 79-91:

Փաստական նյութի աղբյուրներ

Discours d'Emmanuel Macronv adressé aux français sur la guerre en Ukraine, mars 2022 <https://www.elysee.fr/emmanuel-macron/2022/03/02/adresse-aux-francais-ukraine>

President Biden's State of the Union Address, February 07, 2023
<https://www.voanews.com/a/transcript-president-biden-s-2023-state-of-the-union-address/6953032.html>

Déclaration de M. Emmanuel Macron, président de la République, en hommage à Jean Moulin, à Lyon le 8 mai 2023 <https://www.vie-publique.fr/discours/289381-emmanuel-macron-08052023-hommage-jean-moulin>

Remarks by President Biden on the Continued Battle for the Soul of the Nation,
1 September 2022
<https://www.democracyinaction.us/2022/biden090122spt.html>

President Joe Biden Remarks on the Continued Battle for the Soul of the Nation Independence National Historical Park Philadelphia, Pennsylvania
September 1 2022
<https://www.democracyinaction.us/2022/biden090122spt.html>

Allocution de M. Emmanuel Macron, à l'annonce de son élection à la présidence de la République, 7 mai 2017 <https://www.vie-publique.fr/discours/202851-allocution-de-m-emmanuel-macron-lannonce-de-son-election-la-presi>

Adresse aux Français, 12 mars 2020 <https://www.elysee.fr/emmanuel-macron/2020/03/12/adresse-aux-francais>

Discours d'Emmanuel Macron à l'Hôtel de Brienne, 13 juillet, 2019

<https://www.elysee.fr/emmanuel-macron/2019/07/13/discours-aux-armees-a-lhotel-de-brienne/>

Remarks by Vice President Joe Biden on U.S.-Korea Relations and the Asia-Pacific, December 06, 2013 <https://obamawhitehouse.archives.gov/the-press-office/2013/12/06/remarks-vice-president-joe-biden-us-korea-relations-and-asia-pacific/>

Discours du Président, Emmanuel Macron au Conseil Constitutionnel, le 5 octobre, 2018 <https://www.elysee.fr/emmanuel-macron/2018/10/05/transcription-du-discours-du-president-emmanuel-macron-au-conseil-constitutionnel>

President Biden's 2023 State of the Union Address, February 07, 2023 <https://www.presidency.ucsb.edu/documents/address-before-joint-session-the-congress-the-state-the-union-29>